Կարգապահական գործ թիվ ԿԳ-26006

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի
կարգապահական հանձնաժողովի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՓԱՍՏԱԲԱՆ ԳԵՎՈՐԳ ՎԱՉԱԳԱՆԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը (այսուհետ նաև՝ **Հանձնաժողով**), Հանձնաժողովի նախագահ՝ Տաթևիկ Շալջյանի, Հանձնաժողովի զեկուցող անդամ՝ Կարեն Խալաթյանի, Հանձնաժողովի անդամներ՝ Վերոնիկա Ալեքսանյանի, Վահե Աստվածատրյանի, Միքայել Դանիելյանի, Գուրգեն Թորոսյանի և Վահագն Քեշիշյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Մերի Տերտերյանի,

մասնակցությամբ՝ դիմող Արա Նազարյանի և փաստաբան Գևորգ Խաչատրյանի,

քննության առնելով փաստաբան Գևորգ Խաչատրյանին (արտոնագիր՝ թիվ 2817) (այսուհետ նաև՝ **Փաստաբան** կամ **Պատասխանող**) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը՝

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.

Արա Նազարյանը (այսուհետ նաև՝ **Դիմող**), դիմելով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ, հայտնել է փաստաբան Գևորգ Խաչատրյանի կողմից իր նկատմամբ ոչ պատշաճ վարքագիծ դրսևորելու վերաբերյալ:

Մասնավորապես, Դիմողը հայտնել է, որ փաստաբան Գևորգ Խաչատրյանը ներկայացնում է իր դատավարական հակառակորդ Անդրանիկ Այվազյանի շահերը: 2025 թվականի օգոստոսի 22-ին փաստաբան Գևորգ Խաչատրյանը մի քանի անձի հետ ապօրինի մուտք է գործել իր տարածք, իր և իր աշխատակիցների հասցեին հնչեցրել է սպառնալիքներ, անարգել է իրեն, նաև՝ հայհոյել է: Ըստ Դիմողի՝ նրանց ասել են, որ գողական աշխարհի ներկայացուցիչներ են, իրենց հետ չարժե գործ ունենալ, սպառնացել են ոտքի և ձեռքի կոտրվածքներ պատճառել:

Թիվ ԿԳ-26006-2-Ա
24.06.2026թ.

Այնուհետև փաստաբան Գևորգ Խաչատրյանը զանգահարել է ենթադրաբար Ոստիկանություն: Որից հետո նրա ընկերներն արագ հեռացել են: Ներկայացել են քաղաքացիական համազգեստով անձինք: Դիմողի կարծիքով՝ ներկայացած ոստիկանները եղել են փաստաբան Գևորգ Խաչատրյանի ընկերները և ներկայացել են առանց ահազանգի:

Դիմողը տեղեկացրել է նաև, որ տասից ավելի վկաներ կարող են վկայություն տալ իր կողմից վկայակոչած հանգամանքների վերաբերյալ և ներկայացրել է միջադեպի ընթացքում կատարված տեսաձայնագրություններ:

Հանձնաժողովի նիստերի ընթացքում Դիմողը պնդել է իր դիրքորոշումը:

<u>2. Պատասխանողի համառոտ բացատրությունները.</u>

Մինչև կարգապահական վարույթ հարուցելու հարցի լուծումը Փաստաբանին առաջարկվել է «Փաստաբանության մասին» օրենքի **(այսուհետ՝ Օրենք)** 39.2-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն ներկայացնել բացատրություն Դիմողի դիմումի վերաբերյալ:

Գևորգ Խաչատրյանը ներկայացրած բացատրությամբ հայտնել է, որ Արա Նազարյանի հայտնած տեղեկությունները չեն համապատասխանում իրականությանը: Դիմողի կողմից նշված օրն ինքն երկու գեոդեզիստների հետ այցելել է իր վստահորդի սեփականությունը հանդիսացող հասցե չափագրումներ իրականացնելու համար: Դիմումատուն իր աշխատակիցների հետ խոչընդոտել է աշխատանքների կատարմանը, հրահրել վեճ, որի պատճառով առաջացել է լեզվակռիվ և հրմշտոց: Այդ պայմաններում ինքը զանգահարել է 102 հեռախոսահամարով: Ժամանել են ոստիկանության աշխատակիցներ: Որոշ ժամանակ անց ստացել է քրեական վարույթ չնախաձեռնելու մասին որոշում, որից հասկացել է, որ Արա Նազարյանը ներկայացրել է հաղորդում իր հասցեին սպառնալիքներ հնչեցնելու մասին, սակայն գրասենյակային տարածքի փոփոխության պատճառով չի կարողացել գտնել այն:

Կից ներկայացրել է հարկադիր կատարող Ռ. Հովհաննիսյանի որոշման և ուղեկցական գրության պատճենները:

Հանձնաժողովի 03.06.2026թ. նիստում Փաստաբանը հայտնել է, որ իրեն վերագրվող վարքագիծը չի ընդունում:

Փաստաբանը պարզաբանել է, որ տվյալ տարածք ներկայացել է մասնագետների հետ՝ գեոդեզիական աշխատանքներ իրականացնելու նպատակով, և առկա է եղել դատական ակտ, որն, իր գնահատմամբ, հնարավորություն է տվել անարգել մուտք գործել տարածք: Ըստ Փաստաբանի՝ Դիմողը խոչընդոտել է գեոդեզիական աշխատանքների կատարմանը և վնասել գեոդեզիստների գույքը, ինչից հետո ինքն անձամբ զանգահարել է ոստիկանություն:

Փաստաբանը միաժամանակ հայտնել է, որ տվյալ վայրում ներկայացել է որպես փաստաբան և ներկայացրել է իր վստահորդի շահերը:

Տեսաձայնագրության վերաբերյալ Փաստաբանը հայտնել է, որ դրա մեջ իր կողմից սեռական բնույթի հայհոյանք չի հնչեցվել, դա չի էլ լսվում ձայնագրության մեջ, իսկ տեսագրությունն ամբողջական չէ և հնարավոր է՝ մոնտաժված լինի: Նշել է նաև, որ տարածքը նկարահանելու թույլտվություն չի եղել:

10.06.2026թ. նիստում Փաստաբանը պնդել է տեսագրության կտրված կամ հնարավոր մոնտաժված լինելու վերաբերյալ իր դիրքորոշումը: Միաժամանակ, ընդունել է, որ վիճաբանության ընթացքում խոսել է նաև փողոցային խոսակցական լեզվով, օրինակ՝ օգտագործել է «արա, այ տղա» արտահայտությունը, սակայն պնդել է, որ չի հայհոյել: Ըստ Փաստաբանի՝ իր նկատմամբ ևս դրսևորվել է կոպիտ վարքագիծ և իրեն սադրել են:

24.06.2026թ. նիստում Փաստաբանը հայտնել է, որ վկաներից ոչ բոլորին է հիշում, որևէ մեկին չի սպառնացել, չի նկատել, որ իրեն տեսանկարահանում են, իսկ տարածք չի ներխուժել, քանի որ այն իր վստահորդին պատկանող տարածք է եղել: Միաժամանակ հայտնել է, որ «բռի պահվածքին բռի է պատասխանել», սակայն իր գնահատմամբ փաստաբանին ոչ հարիր վարքագիծ չի դրսևորել:

<u>3. Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>

Պալատի նախագահի 16.02.2026թ. թիվ 96-Ա/ԿԳ-26006 որոշմամբ փաստաբան Գևորգ Խաչատրյանի նկատմամբ Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, ինչպես նաև Փաստաբանի վարքագծի կանոնագրքի (այսուհետ՝ **Կանոնագիրք)** 2.2.2 ենթակետի խախտման հատկանիշներով հարուցվել է կարգապահական վարույթ:

20.02.2026թ. կարգապահական գործի նախապատրաստումը հանձնարարվել է Պալատի աշխատակազմի սպասարկող անձնակազմի աշխատակից՝ Գարիկ Հախնազարյանին (այսուհետ նաև՝ **Աշխատակից):**

<u>3.1. Վկաների ցուցմունքները.</u>

Վկա Էլյա Գևորգի Հովհաննիսյանը հայտնել է, որ աշխատում է Դիմողի մոտ և ներկա է գտնվել վիճաբանությանը: Վկան հաստատել է, որ Փաստաբանը վիճաբանության ընթացքում հնչեցրել է հայհոյանքներ և տարածքում «քաք» բերելու ու լցնելու վերաբերյալ արտահայտություն: Վկան հայտնել է նաև, որ Մարիամ Մինասյանը նկարահանել է տեղի ունեցածը:

Էլյա Հովհաննիսյանի՝ նախկինում տեղի ունեցած այլ դեպքերի վերաբերյալ հայտնած տեղեկությունները Հանձնաժողովը սույն որոշման հիմքում չի դնում, քանի որ դրանք դուրս են սույն կարգապահական վարույթի առարկա հանդիսացող կոնկրետ միջադեպի սահմաններից:

Վկա Մարիամ Զոհրաբի Մինասյանը հայտնել է, որ աշխատում է համապատասխան տարածքում և անձամբ ներկա է գտնվել միջադեպին: Նրա ցուցմունքով՝ գեոդեզիական աշխատանքներ իրականացնելու նպատակով ներկայացած անձանց և Դիմողի միջև առաջացած վիճաբանության ընթացքում Փաստաբանը սկսել է հայհոյել ներկաներին, այդ թվում՝ իրեն, հնչեցրել է սեռական բնույթի հայհոյանքներ և այլ նվաստացուցիչ արտահայտություններ, այդ թվում՝ «դու ում շունն ես», ինչպես նաև հայտարարել է տարածքում «քաք» բերելու և լցնելու մասին:

Մարիամ Մինասյանը հայտնել է, որ ինքն է իր հեռախոսով կատարել գործին կցված տեսաձայնագրությունը: Նա նշել է, որ նկարահանման ընթացքում ներկա անձանցից մեկը հարվածել է իր հեռախոսին, իսկ Փաստաբանը տեսել է, որ ինքը նկարահանում է:

Վկա Անդրե Ժորժիկի Դավուդյանը հայտնել է, որ աշխատում է Դիմողի մոտ և անձամբ ներկա է գտնվել վիճաբանությանը: Վկան հաստատել է, որ Փաստաբանը Դիմողի հասցեին հնչեցրել է սեռական բնույթի հայհոյանքներ և տարածքում «քաք» բերելու ու լցնելու վերաբերյալ արտահայտություն: Նա հայտնել է նաև, որ վիճաբանության ընթացքում կանխել է Փաստաբանի՝ Դիմողին մոտենալը: Վկան հաստատել է, որ Մարիամ Մինասյանը նկարահանել է միջադեպը:

Վկա Գագիկ Ծատուրյանը հայտնել է, որ աշխատում է Դիմողից վարձակալած գրասենյակում և վիճաբանության վայր է հասել բարձր ձայների պատճառով: Վկան հաստատել է, որ լսել է Փաստաբանի կողմից հնչեցված սեռական բնույթի հայհոյանքներ և տարածքում «քաք» բերելու ու լցնելու վերաբերյալ արտահայտություն:

Վկա Գոռ Յուրիի Հովակիմյանը հայտնել է, որ աշխատում է Դիմողի մոտ և ներկա է գտնվել միջադեպին: Նա ևս հաստատել է Փաստաբանի կողմից հայհոյանքներ և տարածքում «քաք» բերելու ու լցնելու վերաբերյալ արտահայտություն հնչեցնելու հանգամանքը: Վկան հայտնել է նաև, որ Մարիամ Մինասյանը բացահայտ նկարահանել է տեղի ունեցածը:

Վկա Գեղարդ Հրաչի Մկրտումյանը հայտնել է, որ վիճաբանության վայր է հասել ուշ՝ այն ժամանակ, երբ ոստիկանության աշխատակիցներն արդեն այնտեղ էին: Վկան հայտնել է, որ անձամբ հայհոյանքներ չի լսել և նախորդ իրադարձությունների մասին տեղեկացել է այլ անձանցից:

Հանձնաժողովը Գեղարդ Մկրտումյանի ցուցմունքը Փաստաբանի կողմից հայհոյանքներ հնչեցնելու հանգամանքը հաստատող ապացույց չի համարում, քանի որ վկան տվյալ վարքագիծն անձամբ չի ընկալել:

Արման Սարգսյանը որպես վկա չի հարցաքննվել, քանի որ չի ներկայացրել անձը հաստատող փաստաթուղթ, իսկ չներկայացած վկաներին հարցաքննելու անհրաժեշտությունը բացակայել է:

<u>4. Կարգապահական գործ նախապատրաստող Աշխատակցի եզրակացությունը և գործի հանձնումը Հանձնաժողովին.</u>

Գործի նախապատրաստման արդյունքում Աշխատակիցը 20.04.2026թ. կազմել է եզրակացություն:

Եզրակացությամբ հաստատված են համարվել սույն որոշման 5-րդ գլխի 1-2-րդ կետերում նշված փաստերը:

Կարգապահական գործը Պալատի Հանձնաժողովին է հանձնվել 20.04.2026թ.:

Հանձնաժողովի նիստերը տեղի են ունեցել՝ 03.06.2026թ. ժամը 18:30-ին, 10.06.2026թ. ժամը 19:30-ին, 24.06.2026թ. ժամը 19:30-ին՝ ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում:

5. Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.

Հանձնաժողովը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, կողմերի բացատրությունները և Հանձնաժողովի նիստում անմիջականորեն հարցաքննված վկաների ցուցմունքները, հաստատված է համարում հետևյալ փաստերը.

1. 2025 թվականի օգոստոսին համապատասխան տարածքում Փաստաբանը հանդես է եկել իր մասնագիտական կարգավիճակով՝ ներկայացնելով իր վստահորդի շահերը: *Սույն փաստը հաստատվում է Փաստաբանի բացատրությամբ:*

2. Գեոդեզիական աշխատանքների իրականացման և տարածքից օգտվելու շուրջ Փաստաբանի և Դիմողի ու տարածքում գտնվող այլ անձանց միջև առաջացել է վիճաբանություն: *Սույն փաստը չի վիճարկվել կողմերի կողմից:*

3. Վիճաբանության ընթացքում Փաստաբանը հնչեցրել է սեռական բնույթի հայհոյանք և այլ կոպիտ ու նվաստացուցիչ արտահայտություններ, այդ թվում՝ տարածքում «քաք» բերելու և լցնելու վերաբերյալ արտահայտություն: *Սույն փաստը հաստատվում է վկաների կողմից՝ Հանձնաժողովի նիստում տված ցուցմունքներով:*

4. Փաստաբանը Հանձնաժողովի նիստում ընդունել է, որ վիճաբանության ընթացքում օգտագործել է փողոցային խոսակցական բառապաշար և «բռի պահվածքին բռի է պատասխանել»: *Նշված հանգամանքը հաստատվում է Փաստաբանի՝ Հանձնաժողովի նիստում տված բացատրությամբ:*

6. Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.

Պալատի աշխատակազմի ղեկավարի 01.06.2026թ. թիվ 779/344-26 տեղեկանքի համաձայն՝ Գևորգ Խաչատրյանը փաստաբան է հանդիսանում 05.08.2020թ.-ից, և 2021-2026թթ. ընկած ժամանակահատվածում կարգապահական տույժ չունի:

7. Պալատի Հանձնաժողովի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.

Հանձնաժողովը գտնում է, որ փաստաբան Գևորգ Խաչատրյանն ենթակա է կարգապահական պատասխանատվության՝ Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի և Կանոնագրքի 2.2.2 ենթակետի խախտման համար:

Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ փաստաբանը պարտավոր է պահպանել նույն օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջները:

Կանոնագրքի 2.2.2 ենթակետի համաձայն՝ *մասնագիտական, հասարակական, հրապարակախոսական և այլ բնագավառում (ոլորտում) փաստաբանը պետք է խուսափի այնպիսի վարքագծից (գործողությունից կամ անգործությունից), որը կարող է կասկածի տակ դնել կամ խաթարել փաստաբանի կամ փաստաբանության նկատմամբ վստահությունը կամ հարգանքը:*

Կանոնագրքի նշված իրավադրույթի խախտման փաստը պարզելու համար Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում պատասխանել հետևյալ հարցադրումներին՝

- արդյո՞ք Փաստաբանի վարքագծի կանոնագիրքը կարող է սահմանափակել փաստաբանի վարքագիծը, այդ թվում՝ արտահայտվելու իրավունքը և արդյո՞ք այդ սահմանափակումը կարող է դիտարկվել «օրենքով նախատեսված սահմանափակման» համատեքստում.

- արդյո՞ք խախտվել է ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի և Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին եվրոպական կոնվենցիայի (այսուհետև՝ Կոնվենցիա) 10-րդ հոդվածի պահանջները.

- արդյո՞ք փաստաբանն իր գործունեությամբ խուսափել է գործել այլ բնագավառներում այնպիսի վարքագծից, որը կարող է կասկածի տակ դնել կամ խաթարել փաստաբանի կամ փաստաբանության նկատմամբ վստահությունը կամ հարգանքը:

7.1.1 Արդյո՞ք Փաստաբանի վարքագծի կանոնագիրքը կարող է սահմանափակել փաստաբանի վարքագիծը, այդ թվում՝ արտահայտվելու իրավունքը և արդյո՞ք այդ սահմանափակումը կարող է դիտարկվել «օրենքով նախատեսված սահմանափակման» համատեքստում:

Հանձնաժողովը գտնում է, որ Կանոնագիրքը կարող է սահմանափակել փաստաբանի վարքագիծը, այդ թվում՝ արտահայտվելու իրավունքը, և այդ սահմանափակումը պետք է դիտարկել որպես օրենքով նախատեսված սահմանափակում՝ հետևյալ պատճառաբանությամբ:

Տվյալ դեպքում նախ և առաջ անհրաժեշտ է հասկանալ, թե արդյոք Փաստաբանի վարքագծի կանոնագրքով նախատեսված փաստաբանի ազատ արտահայտվելու իրավունքի սահմանափակումները դիտվում են «**օրենքով նախատեսված սահմանափակման**» համատեքստում, թե՝ ոչ:

KINCSES v. HUNGARY գործով 27.01.2015թ. որոշմամբ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ ***դիմողի արտահայտվելու ազատությանը միջամտությունը հիմնված է 1998 թվականի թիվ 11 ակտի[1] 37ա և 38 հոդվածների վրա, հետևաբար՝ նախատեսված է եղել օրենքով***[2]:

Հունգարիայի փաստաբանության վերաբերյալ օրենքի (թիվ 11 ակտի) 37ա հոդվածի համաձայն՝ *փաստաբանի կողմից կարգապահական խախտումը համարվում է կատարված, եթե նա ..... խախտել է փաստաբանի էթիկայի նորմերով նախատեսված պարտավորությունները*:

Նշված օրենքի 38-րդ հոդվածը խոսում է Հունգարիայի փաստաբանների պալատի կողմից կիրառվող կարգապահական տույժերի տեսակների մասին:

Հետևաբար, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հունգարիայի փաստաբանը փաստաբանական պալատի կողմից կարգապահական պատասխանատվության էր ենթարկվել Փաստաբանների էթիկայի կանոնների 12.1 և 15.2 կետերի խախտման համար, ապա **միանշանակ կարելի է փաստել, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի համաձայն՝ փաստաբանի արտահայտվելու իրավունքի սահմանափակման վերաբերյալ դրույթները, որոնք սահմանված են փաստաբանների էթիկայի նորմերով, Կոնվենցիայի տեսանկյունից հավասարեցվում են օրենքով նախատեսված սահմանափակումներին:**

---

[1] Հունգարիայի փաստաբանության վերաբերյալ օրենք:

[2] Տե՛ս KINCSES v. HUNGARY 27.01.2015 (no. 66232/10, § 27)

Նույն կերպ պետք է ընկալել Պալատի կողմից հաստատված փաստաբանի վարքագծի կանոնագրքով նախատեսված սահմանափակումները, քանի որ Օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության նույն օրենքի և **փաստաբանի վարքագծի կանոնագրքի** պահանջները խախտելու համար.....:*

7.1.2. Արդյո՞ք խախտվել է ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի և Կոնվենցիայի 10-րդ հոդվածի պահանջները, սույն կարգապահական գործով:

ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *կարծիքի արտահայտման ազատությունը կարող է սահմանափակվել **միայն օրենքով**՝ պետական անվտանգության, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ **այլոց պատվի ու բարի համբավի** և այլ հիմնական իրավունքների և ազատությունների **պաշտպանության նպատակով**:*

Այդպիսի կարգավորում ունի նաև Կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ մասը, համաձայն որի՝ *այս ազատությունների իրականացումը, քանի որ այն կապված է պարտավորությունների և պատասխանատվության հետ, կարող է պայմանավորվել այնպիսի ձևականություններով, պայմաններով, սահմանափակումներով կամ պատժամիջոցներով, **որոնք նախատեսված են օրենքով և անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում**՝ ի շահ պետական անվտանգության, տարածքային ամբողջականության կամ հասարակության անվտանգության, անկարգությունները կամ հանցագործությունները կանխելու, առողջությունը կամ բարոյականությունը, ինչպես և այլ անձանց հեղինակությունը կամ իրավունքները պաշտպանելու, խորհրդապահական պայմաններով ստացված տեղեկատվության բացահայտումը կանխելու կամ արդարադատության հեղինակությունն ու անաչառությունը պահպանելու նպատակով:*

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, մեկնաբանելով համացանցում արտահայտվելու ազատության պաշտպանության շրջանակների հարցը, նշել է, որ անձի արժանապատվության նկատմամբ ոտնձգությունը կարող է արտահայտվելու ազատության իրավունքի պաշտպանության շրջանակից դուրս լինել, եթե դա անիմաստ վիրավորանք է, օրինակ՝ երբ վիրավորական հայտարարության միակ նպատակը անձին վիրավորելն է:[3]

Կարևոր է պարզել, թե Կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ մասի լույսի ներքո արդյոք փաստաբանի վարքագծի սահմանափակումը եղել է իրավաչափ, թե՝ ոչ:

ա) Օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի, 19-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, 27-րդ հոդվածի և 39-րդ հոդվածի համաձայն, հաշվի առնելով KINCSES v. HUNGARY գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանը 27.01.2015թ. որոշմամբ[4] բերված իրավական դիրքորոշումները, Փաստաբանի վարքագծի կանոնագրքով նախատեսված սահմանափակումներն ամբողջությամբ տեղավորվում են Կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված «***որոնք նախատեսված են օրենքով***» հասկացության մեջ:

Եվրոպական դատարանի նշված գործով փաստական հանգամանքները նույնական են, այնքանով, որքանով՝ KINCSES v. HUNGARY գործով դիմողը փաստաբան է և վերջինիս պատասխանատվության է ենթարկել փաստաբանական պալատն արտահայտվելու համար՝ փաստաբանի էթիկայի կանոնների խախտման հիմքով: Հունգարիայի փաստաբանության

---

[3] CASE OF MAGYAR TARTALOMSZOLGÁLTATÓK EGYESÜLETE AND INDEX.HU ZRT-ն ընդդեմ Հունգարիայի, թիվ 22947/13, 02/02/2016, § 76:

[4] Տես՝ ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 4-րդ մաս

օրենսդրությունը էթիկայի կանոնների մասով նույնպես վկայակոչող (բլանկետային) է և հղում է կատարում արդեն փաստաբանական պալատի սահմանած էթիկայի կանոններին:

բ) Կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ մասի մյուս կարևոր պայմանն այն է, թե արդյոք Պալատը, փաստաբանի արտահայտվելու ազատությունը Կանոնագրքով սահմանափակելով, իրավաչափ նպատակ է հետապնդել պաշտպանելու այլ անձանց հեղինակությունը, թե՝ ոչ: Նշվածը պարզելու համար նախ պետք է մեջբերել Օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ և 5-րդ կետերը, այն է՝ Փաստաբանների պալատի խնդիրներն են՝ *4) վերահսկողություն իրականացնել իր անդամների կողմից ..... փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջների պահպանման ..... նկատմամբ. 5) միջոցներ ձեռնարկել **փաստաբանության** հեղինակության բարձրացման ուղղությամբ*: Փաստաբանության հասկացությունը տրված է նույն օրենքի 3-րդ հոդվածում, որի համաձայն՝ *Փաստաբանությունը **փաստաբանների մասնագիտական միավորում է**, որը, հանդիսանալով քաղաքացիական հասարակության ինստիտուտ, չի մտնում պետական և տեղական ինքնակառավարման մարմինների համակարգի մեջ:*

Նշված իրավական նորմերի վերլուծությունից միանշանակ պարզ է դառնում, որ Պալատի խնդիրներից է բարձր պահել ՀՀ բոլոր փաստաբանների միավորման արդյունքում ձևավորված կառույցի հեղինակությունը, և հետևաբար, Պալատի մարմին հանդիսացող Պալատի Հանձնաժողովի կողմից այն փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելը, որը խախտել է Կանոնագրքի համապատասխան պահանջը՝ դրանով իսկ բացասաբար ազդելով բոլոր փաստաբանների հավաքական միավորում հանդիսացող փաստաբանության հեղինակության վրա:

գ) Կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ մասի մյուս կարևոր պայմանն այն է, թե արդյոք ժողովրդավարական հասարակության համար նման միջամտությունն անհրաժեշտ էր և հետևաբար, արդյո՞ք պահպանվել էր այն հավասարակշռությունը մի կողմից փաստաբանության հեղինակության պաշտպանության, և մյուս կողմից անձի արտահայտվելու ազատության սահմանափակման միջև: Այս հարցին անդրադառնալու համար նախ և առաջ անհրաժեշտ է խոսել հասարակությունում փաստաբանության դերի և նշանակության մասին:

Այսպես՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային որոշումների համաձայն՝ *փաստաբաններն իրենց հատուկ կարգավիճակով պայմանավորված՝ որպես միջնորդ, կենտրոնական դիրք են զբաղեցնում հանրության և դատարանների միջև արդարադատության իրականացման գործընթացում: Նման կարգավիճակով է բացատրվում նրանց վարքագծի նկատմամբ սովորաբար կիրառվող սահմանափակումները որպես փաստաբանական միության անդամ*[5]:

Կանոնագրքի 1.1 ենթակետի համաձայն՝ *իրավունքի գերակայության հանդեպ ունեցած հարգանքի վրա հիմնված հասարակության մեջ փաստաբանը հատուկ դեր է ստանձնում: Փաստաբանի պարտականությունները չեն սկսվում և ավարտվում միայն հանձնարարականների բարեխիղճ կատարմամբ: Փաստաբանը կոչված է ծառայել արդարադատության շահերին, ինչպես նաև այն իրավունքներին ու արտոնություններին, որոնք նրան վստահել են պաշտպանելու իր վստահորդի շահերը:*

Փաստաբանի մասնագիտական գործունեության հանդեպ հարգանքը կարևոր պայման է հասարակության մեջ իրավունքի գերակայության և ժողովրդավարության համար:

Կանոնագրքի 1.2 ենթակետի համաձայն՝ *մասնագիտական գործունեության*

---

[5] Տե՛ս Casado Coca v. Spain գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի, 24.02.1994թ. վճիռը (§ 54):

սկզբունքները ձևավորվել են Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կողմից, երաշխավորելու փաստաբանի պատշաճ գործունեությունը, ինչին բոլոր քաղաքակիրթ հասարակությունները կարևոր նշանակություն են տալիս: Սկզբունքների ձևավորման համար կարևոր նշանակություն են ունեցել Հայաստանի Հանրապետության փաստաբանների կողմից ձևավորված ավանդույթները, ինչպես նաև ***Եվրոպայի փաստաբանների միությունների և իրավական համայնքների խորհրդի[6] կողմից սահմանած «Եվրոպայի փաստաբանների համար վարքագծի կանոնագրքի» դրույթները****:*

Պալատի կանոնադրության 2.2 կետի 8-րդ ենթակետի համաձայն՝ *փաստաբանների պալատը հետապնդում է նաև հետևյալ նպատակները և խնդիրները՝* ***նպաստել*** *Հայաստանի Հանրապետության լիակատար ինտեգրմանը եվրոպական կառույցներում, Հայաստանի Հանրապետության օրենսդրության ներդաշնակեցմանը եվրոպական չափանիշներին,* ***եվրոպական իրավական ստանդարտների և ավանդույթների արմատավորմանը****:*

Եվրոպայի փաստաբանների միությունների և իրավական համայնքների խորհրդի (այսուհետ՝ նաև CCBE) կողմից հաստատված եվրոպական իրավական մասնագիտության հիմնական սկզբունքների վերաբերյալ կոմենտարների «դ» կետի համաձայն՝ *փաստաբանը, որպեսզի հարգվի իր վստահորդների, երրորդ անձանց, դատարանների և պետության կողմից, պարտավոր է արժանանալ այդ հարգանքին: Դա հնարավոր է անդամագրվելով հեղինակային մասնագիտությանը. հետևաբար, փաստաբանը չպետք է անի այն ամենը, ինչը կարող է հեղինակազրկել ինքն իրեն կամ առհասարակ փաստաբանությանը, որպես մասնագիտություն, կամ թուլացնել տվյալ մասնագիտության նկատմամբ հասարակության վստահությունը: Դա չի նշանակում, որ փաստաբանը պետք է լինի կատարյալ անձնավորություն, բայց դա նշանակում է, որ նա չպետք է ցուցաբերի ոչ հարիր վարքագիծ, թե փաստաբանություն, թե այլ տեսակի գործունեություն իրականացնելիս, թե նույնիսկ մասնավոր կյանքում, որով հնարավոր է որ վարկաբեկվի տվյալ մասնագիտությունը[7]:*

ՀՀ Սահմանադրական դատարանի 2016թ. ապրիլի 5-ի թիվ ՍԴՈ-1263 որոշմամբ դատարանը նշել է. *«Ինքնանպատակ չէ այն հանգամանքը, որ ի տարբերություն 2005թ. խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 20-րդ հոդվածի, որի 1-ին մասի 1-ին նախադասությամբ ամրագրված դրույթով սահմանված էր իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը, 2015թ. խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 64-րդ հոդվածը, որը վերաբերում է դիտարկվող իրավունքին, պարունակում է 2-րդ մաս, որի 1-ին նախադասությամբ ամրագրված է հետևյալ դրույթը. "Իրավաբանական օգնություն ապահովելու նպատակով երաշխավորվում է անկախության, ինքնակառավարման և փաստաբանների իրավահավասարության վրա հիմնված փաստաբանության գործունեությունը»: Դրանով իսկ պետությունն ընդլայնել է որակյալ իրավաբանական օգնություն ցուցաբերելու իր պոզիտիվ պարտականության շրջանակները* ***սահմանադրական մակարդակի բարձրացնելով փաստաբանության որպես որակյալ իրավաբանական օգնություն տրամադրող ինստիտուտի դերը****»:*

Ամփոփելով վերը նշվածը՝ կարելի է եզրակացնել, որ կշեռքի մի նժարի վրա դրված է փաստաբանի արտահայտվելու ազատությունը, իսկ մյուս նժարի վրա՝ փաստաբանության, որպես քաղաքացիական հասարակության ինստիտուտի, որին Սահմանադրությամբ վերապահվել է պետության կողմից երաշխավորված անձի իրավաբանական օգնություն

---

[7] Տե՛ս CCBE A Commentary on the Charter of Core Principles of the European Legal Profession

ստանալու իրավունքի ապահովումը, հեղինակությունը, մի կառույցի հեղինակությունը, որին անդամագրված են արդարադատության իրականացման գործընթացում հասարակության և դատարանի միջև միջնորդ հանդիսացող փաստաբանները, կառույց, որի բարձր հեղինակությունից է նաև կախված յուրաքանչյուր փաստաբանի հեղինակությունը պետական մարմինների, դատարանների և այլ անձանց հետ հարաբերվելիս:

Այս տեսանկյունից, բնականաբար, արդարացված և հավասարակշռված է փաստաբանի արտահայտվելու ազատության սահմանափակումը, որն ուղղված է մյուս բոլոր փաստաբանների և առհասարակ փաստաբանության հեղինակության բարձրացմանը: Նման սահմանափակումն անհրաժեշտ է հասարակության համար:

7.1.3 արդյո՞ք փաստաբանն իր գործունեությամբ խուսափել է մասնագիտական, հասարակական, հրապարակախոսական կամ այլ բնագավառներում այնպիսի վարքագծից, որը կարող է կասկածի տակ դնել կամ խաթարել փաստաբանի կամ փաստաբանության նկատմամբ վստահությունը կամ հարգանքը:

Կանոնագրքի 2.2.2 ենթակետի համաձայն՝ *մասնագիտական, հասարակական, հրապարակախոսական և այլ բնագավառում (ոլորտում) փաստաբանը պետք է խուսափի այնպիսի վարքագծից (գործողությունից կամ անգործությունից), որը կարող է կասկածի տակ դնել կամ խաթարել փաստաբանի կամ փաստաբանության նկատմամբ վստահությունը կամ հարգանքը:*

Սույն ենթակետով փաստաբանի վրա դրվում է նեգատիվ պարտականություն խուսափելու այնպիսի վարքագծից, որը կարող է կասկածի տակ դնել կամ խաթարել փաստաբանության նկատմամբ վստահությունը կամ հարգանքը:

Փաստաբանի վարքի նկատմամբ հարաբերականորեն խիստ սահմանափակումները պայմանավորված են փաստաբանի մասնագիտության առանձնահատուկ բնույթով և հանրային բարձր կարգավիճակով, որը պայմանավորված է փաստաբանության՝ որպես իրավապաշտպան գործունեության մեծ կարևորությամբ: Փաստաբանը հանդիսանում է հասարակության հատուկ սուբյեկտ, ով ստանձնել է իր առանձնահատուկ դերը՝ իրավունքի գերակայության հանդեպ ունեցած հարգանքի շնորհիվ և որպես իրավապաշտպան գործունեություն իրականացնող սուբյեկտ նպաստում է արդարադատության իրականացմանը: Փաստաբանի պարտականությունները չեն սկսվում և ավարտվում միայն վստահորդների հանձնարարականների բարեխիղճ կատարմամբ: Փաստաբանի մասնագիտական գործունեության հանդեպ հարգանքը կարևոր պայման է հասարակության մեջ իրավունքի գերակայության և ժողովրդավարության ընկալման համար:

Սույնի համատեքստում փաստաբանի վրա են դրվում են բազմազան իրավական և բարոյական պարտավորություններ, և նրա նկատմամբ գործում են առանձնահատուկ պահանջներ՝ կապված անձնական վարքագծի հետ. լինի դա մասնագիտական գործունեության, թե այլ ոլորտներում:

Նախ Հանձնաժողովն արձանագրում է, որ քննության առարկա միջադեպի ժամանակ Փաստաբանը համապատասխան վայր է ներկայացել ոչ թե որպես մասնավոր անձ, այլ որպես իր վստահորդի շահերը ներկայացնող փաստաբան: Այդ հանգամանքը Փաստաբանն անձամբ հաստատել է Հանձնաժողովի նիստում՝ հայտնելով, որ տվյալ վայրում ներկայացել է որպես փաստաբան և ներկայացրել է իր վստահորդի շահերը: Հետևաբար միջադեպի ընթացքում Փաստաբանի վարքագիծը դրսևորվել է մասնագիտական գործունեության իրականացման

շրջանակում և ենթակա է գնահատման Կանոնագրքի 2.2.2 ենթակետի պահանջների տեսանկյունից:

Գործով նաև անվիճելի է, որ գեոդեզիական աշխատանքների իրականացման և տարածքից օգտվելու շուրջ Փաստաբանի, Դիմողի և տարածքում գտնվող այլ անձանց միջև առաջացել է վիճաբանություն: Վիճաբանությունը տեղի է ունեցել մի շարք անձանց ներկայությամբ, որոնցից մի քանիսը հետագայում Հանձնաժողովի նիստում հարցաքննվել են որպես վկաներ և հայտնել են իրենց հայտնի հանգամանքները:

Վկաների ցուցմունքների գնահատման կապակցությամբ Հանձնաժողովը կարևոր է համարում մրցակցության և կողմերի հավասարության այն երաշխիքները, որոնք ձևավորվել են նաև ՀՀ սահմանադրական դատարանի և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքում:

Մասնավորապես 09.06.2015թ. թիվ ՍԴՈ-1213, 28.12.2010թ. թիվ ՍԴՈ-931 և 23.06.2016թ. ՍԴՈ-1289 որոշումներում ՍԴ-ն անդրադարձել մրցակցության և կողմերի հավասարության ինստիտուտին:

ՍԴ-ն գտել է, որ վարույթի յուրաքանչյուր կողմին պետք է տրամադրվի ողջամիտ հնարավորություն՝ ներկայացնելու իր փաստարկները, ներառյալ՝ ապացույցներն այնպիսի պայմաններում, որոնք նրան մյուս կողմի համեմատ չեն դնում էականորեն անբարենպաստ վիճակում:

Իր վարույթում գտնվող մի շարք գործերով համանման դիրքորոշում է արտահայտել նաև ՄԻԵԴ-ը (Dombo Beheer v Netherlands, Judgement, 22.09.1993, Rowe and Davis v the United Kingdom, Judgement 16.02.2000, Nikoghosyan and Melkonyan v 9 Armenia, Judgment 06.12.2007, Steck-Risch v Liechtenstein, Jundgement, 19.05.2005 և այլն):

Ավելին՝ ՄԻԵԴ-ն ուղղակիորեն պարտադիր է համարել վարույթի կողմերին վկաներին հավասար պայմաններում հարցաքննելու իրավունքի ապահովումը (T.K. v Lithuania, Judgment, 12.06.2018, Schatschaschwili v. Germany, Grand Chamber, Judgement, 15.12.2015 և այլն): ՄԻԵԴ-ը գտել է, որ որպես կանոն վկաները պետք է հարցաքննվեն հրապարակային նիստում, և գրավոր ցուցմունքները պետք է դիտարկվեն միայն վկաների բացակայության բավարար հիմքերի առկայությունը պարզելուց հետո: Ընդ որում, եթե վկաների գրավոր ցուցմունքները հանդիսանում են անձի մեղքն ապացուցող միակ բավարար չափով վստահելի ապացույցը, ապա դրանք վարույթն իրականացնող մարմնի կողմից պետք է հետազոտվեն հատուկ մանրակրկտությամբ (Al-Khawaja and Tahery v. the United Kingdom Grand Chamber, Judgment, 15.12.2011):

Նույն մոտեցումն արտահայտվել է նաև Պալատի խորհրդի 29.07.2020թ. թիվ ԿԳ/70-Ա որոշմամբ: Այդ գործով Խորհուրդը, գնահատելով վկաների ցուցմունքները, էական նշանակություն է տվել Պատասխանողի՝ վկաներին հարցեր ուղղելու հնարավորությանը և, արձանագրելով, որ այդ հնարավորությունը փաստացի չի ապահովվել, նշել է՝ «Նման պայմաններում, երբ Պատասխանող կողմը հնարավորություն չի ունեցել հարցեր ուղղել վկաներին (...) նշյալ ցուցմունքները գնահատելիս խորհրդի մոտ արժանահավատության հարցում կասկած է առաջացել»:

Սույն գործով, սակայն, վկաները հարցաքննվել են Հանձնաժողովի նիստում՝ Փաստաբանի մասնակցությամբ: Փաստաբանն ունեցել է նրանց հարցեր ուղղելու, նրանց հաղորդած տեղեկությունները վիճարկելու, հնարավոր հակասությունները մատնանշելու և նրանց արժանահավատությունը կասկածի տակ դնելու հնարավորություն: Հետևաբար վկաների ցուցմունքներն օգտագործվում են այն պայմաններում, երբ Պատասխանողին

ապահովվել է իր դեմ ներկայացված ցուցմունքները մրցակցային կարգով ստուգելու իրական հնարավորություն:

Մարիամ Մինասյանը հայտնել է, որ անձամբ ներկա է գտնվել միջադեպին և լսել է Փաստաբանի կողմից սեռական բնույթի հայհոյանքներ, «դու ում շունն ես» և տարածքում «քաք» բերելու ու լցնելու վերաբերյալ արտահայտություն: Անդրե Դավուդյանը ևս հայտնել է, որ անձամբ ներկա է գտնվել վիճաբանությանը և լսել է Փաստաբանի կողմից սեռական բնույթի հայհոյանքներ և տարածքում «քաք» լցնելու վերաբերյալ արտահայտություն: Գագիկ Ծատուրյանը հաստատել է, որ լսել է Փաստաբանի կողմից սեռական բնույթի հայհոյանքներ և նույն կոպիտ արտահայտությունը: Գոռ Հովակիմյանը և Էլյա Հովհաննիսյանը ևս հաստատել են Փաստաբանի կողմից հայհոյանքներ և կոպիտ արտահայտություններ հնչեցնելու հանգամանքը:

Հանձնաժողովը հաշվի է առնում, որ նշված վկաներից մի քանիսը Դիմողի աշխատակիցներն են կամ վերջինիս հետ գտնվում են այլ հարաբերությունների մեջ: Սակայն, ինչպես արդեն նշվեց, այդ հանգամանքն ինքնին բավարար չէ նրանց ցուցմունքները ոչ արժանահավատ համարելու համար: Էական է նաև այն, որ վկաները հարցաքննվել են Փաստաբանի ներկայությամբ, իսկ Փաստաբանի կողմից չեն մատնանշվել այնպիսի էական հակասություններ կամ կոնկրետ հանգամանքներ, որոնք կասկածի տակ կդնեին նրանց կողմից նկարագրված վարքագծի տեղի ունենալը:

Միաժամանակ Հանձնաժողովն առանձնահատուկ նշանակություն է տալիս հենց Փաստաբանի սեփական բացատրությանը: Փաստաբանը, չընդունելով իրեն վերագրվող կոնկրետ սեռական բնույթի հայհոյանքների գործածումը, միաժամանակ ընդունել է, որ վիճաբանության ընթացքում օգտագործել է փողոցային խոսակցական լեզու և, իր ձևակերպմամբ, «բռի պահվածքին բռի է պատասխանել»:

Տեսաձայնագրությունների վերարտադրումից հետո Փաստաբանը հայտնել է, որ դրանցում ինքը գործածում է «քար» բառը: Հանձնաժողովը նախ հաշվի է առնում, որ միջադեպին անձամբ ներկա գտնված հինգ վկաները միմյանց համապատասխանող ցուցմունքներ են տվել Փաստաբանի կողմից տարածքում «քաք» լցնելու վերաբերյալ միևնույն կոպիտ արտահայտությունը գործածելու մասին: Այդ ցուցմունքները ընդհանուր կամ ենթադրական բնույթ չեն կրում և վերաբերում են Փաստաբանի կողմից հնչեցված կոնկրետ արտահայտությանը:

Հանձնաժողովի գնահատմամբ՝ նշված ընդունումն արդեն ինքնուրույն նշանակություն ունի Կանոնագրքի 2.2.2 ենթակետի կիրառման համար: Փաստաբանը տվյալ պահին հանդես է եկել իր մասնագիտական կարգավիճակով և վստահորդի շահերը ներկայացնելու ընթացքում իր իսկ վարքագիծը բնութագրել է որպես «բռի պահվածքին բռի պատասխան», իսկ դրա համապատասխանությունը մասնագիտական վարքագծի պահանջներին ենթակա է Հանձնաժողովի գնահատմանը:

Կանոնագրքի 2.2.2 ենթակետի կիրառման համար անհրաժեշտ չէ, որ փաստաբանի վարքագիծը պարտադիր արտահայտվի որևէ նախապես սահմանված բառի կամ արտահայտության գործածմամբ: Գնահատման առարկան վարքագիծն է՝ իր պրոցեսուալ բնույթով և այն հարցը, թե այն օբյեկտիվորեն կարո՞ղ է կասկածի տակ դնել կամ խաթարել փաստաբանի կամ փաստաբանության նկատմամբ վստահությունն ու հարգանքը: Վստահորդի շահերը ներկայացնող փաստաբանի կողմից սեփական վարքագիծը «բռի պահվածքին բռի պատասխան» բնութագրելը, Հանձնաժողովի գնահատմամբ, արդեն իսկ

անհամատեղելի է մասնագիտական կարգավիճակից բխող վարքագծային նվազագույն պահանջների հետ:

Հետևաբար նույնիսկ այն դեպքում, եթե մի կողմ դրվեն վկաների կողմից Փաստաբանին վերագրվող առանձին արտահայտությունները, Փաստաբանի սեփական բացատրությունը բավարար հիմք է արձանագրելու, որ վստահորդի շահերը ներկայացնելու ընթացքում նրա վարքագիծը դուրս է եկել մասնագիտական հաղորդակցության պատշաճ սահմաններից և օբյեկտիվորեն կարող էր կասկածի տակ դնել փաստաբանի և փաստաբանության նկատմամբ վստահությունն ու հարգանքը:

8. <u>Կարգապահական տույժի ընտրությունը.</u>

Անդրադառնալով նշանակվող կարգապահական տույժի տեսակին՝ Հանձնաժողովն արձանագրում է հետևյալը:

Օրենքի 39.10 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *փաստաբանի կարգապահական պատասխանատվության հարցը քննելուց հետո փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը կարող է փաստաբանի նկատմամբ կիրառել կարգապահական տույժերի հետևյալ տեսակներից մեկը, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքի.*

1) նկատողություն.

2) խիստ նկատողություն.

3) լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցել.

4) տուգանք.

5) փաստաբանի արտոնագրի գործողության դադարեցում:

Օրենքի 39.10 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *փաստաբանի նկատմամբ կիրառվող կարգապահական տույժը պետք է համաչափ լինի կատարված խախտմանը: Կարգապահական տույժ կիրառելիս փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը հաշվի է առնում նաև խախտման հետևանքները, փաստաբանի անձը, մեղքի աստիճանը, առկա տույժերը, փաստաբանին բնութագրող ուշադրության արժանի այլ հանգամանքներ:*

Հանձնաժողովը գտնում է, որ Փաստաբանի նկատմամբ «նկատողություն» կարգապահական տույժի, ինչպես նաև լրացուցիչ տույժի՝ «Դեոնթոլոգիա» թեմայով վերապատրաստման դասընթացների մասնակցության կիրառումը համաչափ է կատարված խախտման բնույթին: Հանձնաժողովի գնահատմամբ՝ նշված տույժերի համակցված կիրառումը բավարար է կատարված խախտմանը պատշաճ արձագանքելու, մասնագիտական հաղորդակցության չափանիշների պահպանման անհրաժեշտությունը շեշտելու և հետագայում նույնաբնույթ վարքագիծը կանխելու համար:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ գնահատելով սույն կարգապահական գործով արձանագրված խախտման բնույթն ու հետևանքները, Փաստաբանի մեղքի աստիճանը, ինչպես նաև կարգապահական տույժերի բացակայության հանգամանքը՝ Հանձնաժողովը գտնում է, որ առավել խիստ կարգապահական տույժի կիրառումն անհրաժեշտ և համաչափ չէ:

Հանձնաժողովն արձանագրում է, որ Փաստաբանը գիտակցել է իր վարքագծի բնույթը և վերը նշված արտահայտությունները հնչեցրել է գիտակցաբար: Հետևաբար Հանձնաժողովը գտնում է, որ Կանոնագրքի 2.2.2 ենթակետի պահանջի խախտումը կատարվել է դիտավորությամբ:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով Օրենքի 11.1-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի, 8-րդ մասի և 39.10-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետերի, 2-րդ և 3-րդ մասերի պահանջներով, Հանձնաժողովը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Փաստաբան Գևորգ Խաչատրյանի (արտոնագիր՝ թիվ 2817) նկատմամբ կիրառել կարգապահական տույժ՝ «նկատողություն», ինչպես նաև լրացուցիչ տույժ՝ 6 ամսվա ընթացքում պարտադիր վերապատրաստման դասընթացների մասնակցություն՝ «Դեոնթոլոգիա» թեմայով 4 ակադեմիական ժամ ժամաքանակով՝ Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի և Կանոնագրքի 2.2.2 ենթակետի պահանջների խախտման համար:

2. Հանձնարարել Հանձնաժողովի նիստերի քարտուղարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

Ծանոթություն. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ փաստաբանների պալատի խորհուրդ կամ դատական կարգով այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն Փաստաբանի կողմից ստանալու հաջորդ օրվանից:

ՀՀ փաստաբանների պալատի
կարգապահական հանձնաժողովի
նախագահ՝ Տաթևիկ Շալջյան

Թիվ ԿԳ-26006-2-Ա
24 հունիսի 2026թ.
ք. Երևան